ԳԱԱ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐՈՒՄ ԷԼ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԿԱ

Շուտով կառավարության դատին կհանձնվի ԳԱԱ բարեփոխումների եւս մի տարբերակ՝ «Հայաստանի գիտնականների հասարակական խորհուրդ» հ/կ-ի եւ Գիտությունների ազգային ակադեմիայի համատեղ մշակմամբ:

Միասնական տարբերակի գաղափարը ծնվել է այն ժամանակ, երբ հ/կ-ն ծանոթացել է ՄԱԿ-ի փորձագետների մշակած բարեփոխումների «հեղափոխական» փաթեթին (գիտնականները ՄԱԿ-ի առաջարկները ճեւակերպում են այսպես՝ քանդել ակադեմիան, գիտությունը համաղատասխանեցնել միջազգային ստանդարտներին) ու ԳԱԱ մշակած, ըստ էության, «անհոգատակ» ծրագրին («ամեն ինչ թողնել նույնը»): Ի վերջո, ԳԱԱ փոխդրեզիդենտ Էդուարդ Ղազարյանի առաջարկով, որոշվել է ստանալ այս ամենի միջինը՝ բարեփոխել եղածը: Այս նոր հայեցակարգն արդեն պատրաստ է եւ հանձնված է նախարարություններին՝ կարծիքի, որից հետո էլ կգնա կառավարություն: Մայիսին էլ կառավարությունը ՞կքննարկի, եւ պարզ կդառնա այս փաթեթի ճակատագիրը: Գիտնականները (այդ թվում եւ՝ այս կազմակերպության անդամները) առիթ ունեցել են ասելու, որ կառավարությունն արդեն աչք է դրել ԳԱԱ մի շարք ինստիտուտների շենքերի վրա եւ մոտ ապագայում նպատակ ունի օտարել հատկապես այն մի քանիսը, որոնք գտնվում են քաղաքի կենտրոնում. մասնավորապես՝ խոսք է գնում նախագահության շենքի հարակից տարածքում գործող ինստիտուտների մասին: Եվ, դատելով այս ամենից, դժվար թե կառավարությանը դուր գան միասնական փաթեթի հատկապես այն կետերը, որոնք պահանջում են. *«Թույլ չտալ օտարելու կամ սեփականաշնորհելու գիտական կազմակերպությանն ամրացված կամ պատկանող գույքը (այդ թվում՝ անշարժ) եւ տարածքը, որը ձեռք է բերվել պետական բյուջեի միջոցներով: Պետական գիտական կազմակերպությունների ցանկացած վերակազմավորում իրականացվում է գիտական խորհուրդների համաձայնությամբ, իսկ նրանց տարածքներն ու գույքը թողնվում են նոր ձեւավորվող կազմակերպությունների տրամադրության տակ՝ գիտական եւ ինովացիոն գործունեության հետ առնչվող խնդիրների լուծման նպատակով»:* Ավելին, առաջարկվում է արգելանքը դնել այս տարվա հունվարից՝ կանխելու հենց այս օրերին ահագնացող լուրերը՝ ԳԱԱ որոշ մասնաշենքերի օտարման մասին:

Երեկ մեզ հետ զրույցում «Հայաստանի գիտնականների հասարակական խորհուրդ» հ/կ անդամ **Սերգեյ Բաջինյանը** կարեւորեց իրենց առաջարկած դեմոկրատական լուծումները՝ գիտահետազոտական ինստիտուտների կառավարման հարցում: *«Այսօր մեծ արտոնություններ են տրված ինստիտուտների տնօրեններին: Թե ինչպես են տնօրինվում թեմատիկ եւ բազային ֆինանսավորումները, ոչ ոք տեղյակ չէ, տնօրենն այսօր քեզ ոչ մի տեղեկատվություն չի տա այդ մասին: Կամ՝ ուր են գնում «այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարները: Եթե հաշվետվություն չի ներկայացվում, տնօրենն իր ցանկությամբ է տնօրինում գումարները, ուրեմն կոռուպցիա կա այստեղ»:* Հ/կ անդամ **Յուրի Թադեւոսյանն** էլ կարծում է, որ եթե ինստիտուտներում չլինեն «մեռած հոգիներ», եւ ֆինանսական հատկացումները ծախսվեն նպատակային, ապա գիտնականների աշխատավարձերը կրկնակի կբարձրանան: Այսպիսով՝ առաջարկվող մյուս կարեւոր փոփոխությունն է. սահմանել գիտական կազմակերպության գիտխորհրդի որոշումների գերակայությունը՝ կազմակերպության գործունեության բոլոր ոլորտներում: *«Ըստ մեր առաջարկների, ամեն ինչ պետք է որոշի գիտխորհուրդը: Վերջինս նաեւ պետք է ընտրի տնօրենին՝ ոտտացիոն սկզբունքով, 1 ժամկետով, ինչպես նաեւ՝ վերահսկի տնօրենի գործունեությունը»,-* բացատրում է հ/կ անդամ **Ազատ Սարգսյանը:**

«Հայաստանի գիտնականների հասարակական խորհուրդը» նաեւ անդրադարձավ ԲՈՀ-ի կարգավիճակի հետ կապված առաջարկներին: Խորհրդի անդամների կարծիքով, ՄԱԿ-ն առաջարկում է լուծարել ԲՈՀ-ը, ինչի արդյունքում, ըստ Ս. Բաջինյանի, կընկնի գիտնականների որակը:

Նրանց ովքեր չեն կարդացել ՄԱԿ-ի ծրագրի՝ ԲՈՀ-ին վերաբերող հատվածը, ասենք, որ այս ծրագրում, ընդհակառակը, ԲՈՀ-ին ավելի բարձր կարգավիճակ է տրվում՝ դարձնելով այն որակավորման եւ փորձագիտության ազգային գործակալություն: Միայն թե գիտական աստիճանի վկայականը տալիս է ոչ թե ԲՈՀ-ը, այլ բուհի գիտխորհուրդը: Ի վերջո՝ կարեւոր չէ, թե ով ինչն է տալու, կարեւորն այն է, որ այդ ամենն արվի արդարացի:

ՀԱՍՄԻԿ ԲՈՒԴԱՂՅԱՆ